ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3276-Ա «09» հոկտեմբերի 2023 թ.

«ԵՐԵՎԱՆԻ ԱԼ.ՇԻՐՎԱՆԶԱԴԵԻ ԱՆՎԱՆ Հ.21 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՎԱԾ ՏՆՕՐԵՆ ԱՐՈՒՍՅԱԿ ԺՈԶԵՖԻ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 9-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի պաշտոնի թափուր տեղի մրցույթի հայտարարման, անցկացման, մասնագիտական հանձնաժողովի ձևավորման, գործունեության և տնօրենի նշանակման կարգը հաստատելու մասին» N 181-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 33-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ» պետական հիմնարկները վերակազմակերպելու, «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 1998 թվականի հոկտեմբերի 28-ի N 661 որոշման մեջ փոփոխություններ կատարելու և 1996 թվականի մայիսի 15-ի N 150 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1392-Ն որոշմամբ հաստատված N 3 հավելվածի 60-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2023 թվականի մարտի 1-ի N 191-Ա հրամանով ձևավորված մասնագիտական հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 28-ի եզրակացությունը, ինչպես նաև Երևանի քաղաքապետի առաջին տեղակալի, Երևանի քաղաքապետի պաշտոնակատարի 2023 թվականի հոկտեմբերի 6-ի հ. Ն/52182-23 գրությունը՝

1. Արուսյակ Ժոզեֆի Բաղդասարյանին՝ 2023 թվականի հոկտեմբերի 9-ից նշանակել «Երևանի Ալ.Շիրվանզադեի անվան հ.21 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում, կնքելով աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով՝ 2023 թվականի հոկտեմբերի 9-ից մինչև 2028 թվականի հոկտեմբերի 9-ը ներառյալ:

2. «Երևանի Ալ.Շիրվանզադեի անվան հ.21 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության ուսումնական աշխատանքների գծով տնօրենի տեղակալ Գոհար Հայրունուն ազատել նույն դպրոցի տնօրենի պարտականությունների կատարումից:

3. «Երևանի Ալ.Շիրվանզադեի անվան հ.21 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության վարչատնտեսական մասի համակարգողի պարտականությունների կատարումը ժամանակավորապես վերապահել նույն կազմակերպության տնօրեն Արուսյակ Բաղդասարյանին:

ԵՐԵՎԱՆՔԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ԱՌԱՋԻՆ ՏԵՂԱԿԱԼ,
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

X

ԼԵՎՈՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Signed by: HOVHANNISYAN LEVON 2903880441